

18/09/2007
համար 294 Ն

**«ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻՆ ՉԱՐԳԵԼՎԱԾ ԵՎ ՀՈՒՍԱԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/05-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՍԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել «Վերաապահովագրողներին չարգելված և հուսալի համարելու չափանիշները» կանոնակարգ 3/05-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի մայիսի 10-ի «Վերաապահովագրողների հուսալի համարելու չափանիշները սահմանելու կարգը հաստատելու մասին» թիվ 190 Ն որոշումը:
3. Սույն որոշումը տարածվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վերաապահովագրության պայմանագրերով վերաապահովագրության փոխանցված ապահովագրության պայմանագրերի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

S.Մարգարյան

*«Վերաապահովագրողներին չարգելված և հուսալի համարելու չափանիշները» կանոնակարգ 3/05-ը հաստատելու մասին***

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է .

1. Հաստատել «Վերաապահովագրողներին չարգելված և հուսալի համարելու չափանիշները» կանոնակարգ 3/05-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի մայիսի 10-ի «Վերաապահովագրողների հուսալի համարելու չափանիշները սահմանելու կարգը հաստատելու մասին» թիվ 190-Ն որոշումը:

3. Սույն որոշումը տարածվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վերաապահովագրության պայմանագրերով վերաապահովագրության փոխանցված ապահովագրության պայմանագրերի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
25 սեպտեմբերի 2007 թ., N 294-Ն*

** Ոչ պաշտոնական հրատարակություն:

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թ. սեպտեմբերի 18-ին:

Չրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 30.10.07 թ. (ՀՀԳՏ N31 (271), 15.11.07):

Հավելված

**Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի սեպտեմբերի 18-ի
թիվ 294-Ն որոշմամբ**

**Վ Ե Ր Ա Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ո Ղ Ն Ե Ր Ի Ն Չ Ա Ր Գ Ե Լ Վ Ա Ճ Ե Վ Հ Ո Ւ Ս Ա Լ Ի
Հ Ա Մ Ա Ր Ե Լ ՈՒ Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր Ը**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 3 / 0 5

1. Չարգելված են համարվում այն վերաապահովագրական ընկերությունները, որոնք օրինականորեն գրանցված են և (կամ) լիցենզավորված են որևէ պետությունում:

2. Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողը համարվում է հուսալի, եթե սույն կետում նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից նրան տրված (բացառությամբ սույն հավելվածի 4-րդ կետում նշված դեպքերի) ֆինանսական կայունության միջազգային վարկանիշը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ վերաապահովագրողների վերաբերյալ ներկայացվող հաշվետվության հաշվետու ամսաթվի դրությամբ ցածր չէ հետևյալ վարկանշային դասակարգումից՝

մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը՝

- Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ ԲԲԲ-
- Մուդիզի «Բաա» խմբի՝ Բաա3
- Ա. Ս. Բեստի «Բ» խմբի՝ Բ+
- Դաֆֆ և Ֆելիզի «ԲԲԲ» խմբի՝ ԲԲԲ-
- Վեխսի «Բ» խմբի՝ Բ-
- Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ ԲԲԲ-

2011 թվականի հունվարի 1-ից հետո՝

- Ստանդարտ և Փուրզի «Ա» խմբի՝ Ա-
- Մուդիզի «Ա» խմբի՝ Ա3
- Ա. Ս. Բեստի «Ա» խմբի՝ Ա-
- Դաֆֆ և Ֆելիզի «Ա» խմբի՝ Ա-
- Վեխսի «Ա» խմբի՝ Ա-
- Ֆիթչի «Ա» խմբի՝ Ա-

3. Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողին հուսալի համարելու համար հիմք է ընդունվում վերաապահովագրողի գրանցման երկրի համապատասխան լիազոր մարմնի կամ այդ վերաապահովագրողին վարկանշած սույն հավելվածի 2-րդ կետում նշված կազմակերպության պաշտոնական տեղեկագրում կամ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված վարկանիշը:

4. Եթե միևնույն ոչ ռեզիդենտ վերաապահովագրողը վարկանշված է սույն հավելվածի 2-րդ կետում նշված երկու վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա նրան հուսալի համարելու համար հիմք է ընդունվում առավել ցածր վարկանիշը: Ընդ որում, հիմք ընդունված վարկանիշը ցածր չպետք է լինի սույն հավելվածի 2-րդ կետում նշված վարկանշային դասակարգումից: Եթե միևնույն վերաապահովագրողը վարկանշված է սույն հավելվածի 2-րդ կետում նշված երեք և ավելի վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա տվյալ վերաապահովագրողին հուսալի համարելու համար հիմք է ընդունվում նրան տրված երկու ամենաբարձր վարկանիշներից առավել ցածրը: Ընդ որում, հիմք ընդունված վարկանիշը ցածր չպետք է լինի սույն հավելվածի 2-րդ կետում նշված վարկանշային դասակարգումից:

5. Որևէ երկրի օրենսդրության իմաստով՝ ֆինանսական խմբին կամ ֆինանսական խմբի մեջ մտնող անձին տրված վարկանիշը չի տարածվում ֆինանսական խմբի մեջ մտնող մյուս անձանց վրա:

6. Սույն կանոնակարգի իմաստով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ վերաապահովագրողները համարվում են հուսալի: